

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՄԲԻՈՆ – ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ


**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՄԱՐԶՈՒՄՆԵՐ»**



(ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ)




Մասնագիտություն/ուղղություն՝ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային  
մարզումներ» (դասիչ՝ 011401.09.6)

Որակավորումը՝ Մանկավարժության բակալավր  
Ֆակուլտետ՝ Հասարակական գիտությունների  
Ուսուցման ձև՝ Առկա(7-րդ և 8-րդ կիսամյակ)

Հաստատված է ամբիոնի նիստում  
(կայացած՝ 18.09.23, արձ. թիվ 4)

Ամբիոնի վարիչ՝ /  / Ա. Բադալյան  
Հաստատված է Հասարակական գիտությունների  
Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում

(կայացած՝ 11.09.23 արձ.թիվ) /   
Դեկան /  / Հ. Բադալյան

Կազմող(ներ)՝ /  / Ա. Բադալյան (ԱՍ ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ)  
/  / Ս. Լուրիջանյան (ԱՍ ամբիոնի դասախոս)  
/  / Հ. Բադալյան (ԱՍ ամբիոնի դասախոս, դոցենտ)

ՎԱՆԱԶՈՐ  
2023 թ.

**«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության  
արտադրական պրակտիկայի ծրագիր**

**1. Պրակտիկայի նպատակը՝**

1.1 Պրակտիկանտին ծանոթացնել ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման գործունեությանը, ապագա մասնագիտական գործունեության յուրահատկություններին,

1.2 Բուհական դասընթացների սահմաններում ուսանողների ձեռքբերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտության ձևավորում,

1.3 Ուսանողների ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

**2. Պրակտիկայի խնդիրները՝**

Արտադրական պրակտիկայի հիմնական խնդիրն է պրակտիկ գործունեության համար լիարժեք մասնագետների պատրաստումն է: Պրակտիկայի ընթացքում ուսանողները պետք է սովորեն.

2.1 Ուսումնասիրել «ֆիզիկական կուլտուրա» առարկան, նրա կառավարման համակարգը, գործունեության բովանդակությունը, անցկացման մեթոդները, ուսումնամարզական գործընթացի անցկացման պայմանները և առանձնահատկությունները,

2.2 Ուսումնասիրել սովորողների տարիքասեռային, հոգեբանական, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և այդ առանձնահատկությունների հիման վրա կառուցել ուսումնական գործընթացը,

2.3 Ինքնուրույն վարել ուսումնամեթոդական փաստաթղթեր, ձևավորել գործնական կարողություններ, որոնք կթույլատրեն կազմել պլանավորման փաստաթղթեր և կատարել տարբեր մեթոդական աշխատանքներ,

2.4 Գնահատել սովորողների կարողությունները, ձևավորել հետաքրքրություններ, ակտիվ և ստեղծագործական մոտեցումներ ուսումնական աշխատանքի նկատմամբ:

**3. Պրակտիկայի հաստատությունը, վայրը՝**

Հասարակական գիտությունների ֆակուլտետի «ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության արտադրական պրակտիկան իրականացվում է Վանաձորի Սայաթ-Նովայի անվան թիվ 10 ավագ դպրոցում:



## Առկա ուսուցման համակարգ՝

Կուրս՝ 4-րդ, 7-8-րդ կիսամյակ			
Հ/Հ	Պրակտիկայի վայրը	Կրեդիտ	Ծանոթություն
1	Հանրակրթական դպրոցներ	6+6	4+4 շաբաթ
ԸՆԴԱՄԵՆԸ		12	8 շաբաթ

### 4. Պրակտիկայի ընթացակարգը

Արտադրական պրակտիկայի ընթացակարգի բովանդակությունը բխում է պրակտիկայի նպատակներից և խնդիրներից: Պրակտիկան անցկացվում է 3 փուլով.

#### ▪ Ուսուցողական-ճանաչողական

Այցելություն համապատասխան հաստատություն, ծանոթություն մանկավարժական գործունեությանը, դասավանդման մեթոդներին:

#### ▪ Գործնական-հետազոտական

Պրակտիկայի վայրի հաստատումից հետո, ուսանողները ղեկավարի անմիջական վերահսկողությամբ, գրաֆիկով հաստատված օրը, ներկայանում են դպրոցներ: Ըստ անհրաժեշտության, պրակտիկանտները բաժանվում են փոքր խմբերի և կցագրված դպրոցներում, համապատասխան ուսուցչի հսկողությամբ, իրականացնում են արտադրական պրակտիկան: Հաջորդիվ, պրակտիկանտը իտեգրվում է ինքնուրույն մանկավարժական գործընթացում՝ դասապրոցեսի ընթացքում կիրառելով ավանդական և ժամանակակից տարբեր մեթոդներ:

#### ▪ Ամփոփման

Այս փուլում իրականացվում է արտադրական պրակտիկայի արդյունքների ամփոփում, պրակտիկայի օրագրերի, ինչպես նաև, անհրաժեշտ այլ փաստաթղթերի լրացում, հաշվետվության կազմում:

**5. Պրակտիկայի ղեկավարը պարտավոր է.**

- Ուսումնասիրել արտադրական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:

- Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ծրագիրը, թեմատիկ պլանները, չափորոշիչը, պրակտիկային համապատասխանող ծրագրի բովանդակությունը:

- Լինել նշված վայրերում, պատկերացում կազմել պրակտիկայի բնույթին, գործունեությանը և աշխատանքի մասին:

- Մասնակցել արտադրական պրակտիկայի կոնֆերանսին, ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրերին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:

- Լրացնել օրագրի «Պրակտիկային նպատակն» էջի համապատասխան տողերը, օգնել պրակտիկանտին ներկայացնել պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

**Պրակտիկայի ընթացքում.**

- Հետևել պրակտիկանտների մասնակցությանը ամրագրված դասարաններում,
- Հետևել ուսուցչի գործողություններին, աշխատանքների կազմակերպմանը,
- Կատարել պլանավորման աշխատանքները,
- Կատարել լկարողությունների հաշվառում և գնահատում,
- Ներկայացնել պրակտիկայի հաշվետվություն և գնահատել:

**Պրակտիկայի ավարտից հետո՝**

- Գնահատել ուսանողի կատարած աշխատանքը տվյալ ոլորտ(ներ)ի ուղղությամբ, որտեղ արտահայտված կլինի ուսանողի ձեռք բերած կարողությունների և հմտությունների ձևավորման պատկերը,

- Ընդհանրացնել ուսանողների կատարած աշխատանքը:

**6. Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները**

- Ծանոթանալ պրակտիկայի վայրին, ուսումնական գործընթացներին
- Մասնակցել ուսումնական գործընթացներին,
- Կատարած աշխատանքների վերաբերյալ պրակտիկանտի կողմից

ներկայացնել հաշվետվություն

**7. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը.**

- Կազմել հաշվետվություն,
- Կազմել դասի օրինակելի պլան,
- Ներկայացնել աշակերտի հոգեբանական բնութագիր,
- Ներկայացնել օրագիր՝ ամբողջական վիճակում,

**8. Պրակտիկայի գնահատումը**

Պրակտիկայի ղեկավարը պարտավոր է.



- Պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել,
- Համապատասխան դեկանատ ներկայացնել բոլոր ուսանողների պրակտիկայի ծրագրով պահանջվող փաստաթղթերը պատշաճ վիճակով,
- Մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտների վերջնական գնահատականի ձևավորմանը,
- Բազմագործոնային համակարգով ներկայացնել առավելագույնը 100 միավորի բաղադրիչները, գնահատման կարգը, ամփոփման կարգն ու ժամկետները, որոնք հիմնված են ՎՊՀ «Պրակտիկայի կանոնակարգի» հիման վրա:

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները.

(գնահատականն ըստ 100 միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում
1. հաճախելիություն	0-10	
2. մշակութային արժեքների և ցուցանիշների ճանաչում	0-20	
3. վարած դասերի վերլուծություն <ul style="list-style-type: none"> <li>• ժամանակակից մեթոդներով աշխատանք</li> <li>• նորագույն տեխնոլոգիաների կիրառում</li> <li>• դասաժամանակի ճիշտ օգտագործում</li> <li>• գնահատում</li> </ul>	0-5 0-5 0-5 0-5	
4. մանկավարժական աշխատանք <ul style="list-style-type: none"> <li>• արտադասարանային աշխատանք (միջոցառում, պատի թերթ, էքսկուրսիա)</li> <li>• դասղեկական ժամի անցկացում և աշխատանք աշակերտական խորհրդի հետ</li> <li>• մանկավարժական տակտ</li> </ul>	0-5 0-5 0-5	
5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք <ul style="list-style-type: none"> <li>• Դասարանի կոլեկտիվի կամ աշակերտի հոգեբանական բնութագրի կազմում</li> <li>• Դասի հոգեբանամանկավարժական վերլուծության անցկացում</li> <li>• Արտադասարանային միջոցառման հոգեբանական հիմնավորում</li> </ul>	0-5 0-5 0-5	
Պաշտպանություն	0-20	
Ընդհանուր միավոր		

Պրակտիկան գնահատվում է՝ ըստ սահմանված չափանիշների՝ բազմագործոնային համակարգով՝ պրակտիկայի ընթացքում ձեռք բերված կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների հիման վրա:

Մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը
96-100/ 20 օր	10
91-95/ 19 օր	8
86-90/ 18 օր	6
81-85/ 17 օր	4
76-80/ 16 օր	2
0-75/ 15 օր	0

#### 9. Պրակտիկայի բավանդակությունը

##### Առաջին շաբաթ.

- ☞ առաջին երկու օրերը նախապատրաստական դասընթացներ, ուսանողների միջև դասարանների բաշխում:
- ☞ «Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի դիտարկում, պարապող ուսուցչի մասնակցությամբ:

##### Երկրորդ շաբաթ.

- ☞ «Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի վարում ուսուցչի օգնությամբ: Օրվա քննարկում, վերլուծություն:

##### Երրորդ շաբաթ.

- ☞ «Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի ինքնուրույն անցկացում, համաձայն ծրագրային պահանջների: Օրվա քննարկում, վերլուծություն:

##### Չորրորդ շաբաթ

- ☞ «Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի ինքնուրույն անցկացում: Տեսական դասի անցկացում նոր ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Դասի ընդհանուր և մոտոռիստության որոշում: Անցկացնել «ուրախստարտներ»:

Ուսանող պրակտիկանտը պարտավոր է ունենալ պրակտիկայից դուրս միջոցառումների անցկացման անհատական պլան-ժամանակացույց:

Պրակտիկայի պաշտպանությանը մասնակցում են պրակտիկայի ղեկավարը, ֆակուլտետի ղեկանը, ամբիոնի վարիչը:

#### 10. Պարակտիկայի արդյունքում ուսանողը պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.



**ա) Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)**

ԳԿ-1 - վերլուծության և համադրության,

ԳԿ-2 - կազմակերպչական կարողություն (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում),

ԳԿ-3 - հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում,

ԳԿ-9 - որոշումներ կայացնելու կարողություն:

**բ) Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՉԿ)**

ՄՉԿ-1 - քննադատության և ինքնաքննադատության կարողություն,

ՄՉԿ-3-թիմային աշխատանքի կարողություն:

**գ) Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)**

ՀԳԿ-4-նոր իրավիճակներին հարմարվելու կարողություն,

ՀԳԿ-6- որակը վերահսկելու կարողություն

**դ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

ԱԿ-4 - տեղեկացված լինի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ժամանակակից տեխնոլոգիաներին, բնագավառի նորություններին, գիտական նվաճումներին,

ԱԿ-5 - իմանա ֆիզիկական վարժությունների կիրառման մեխանիզմին և ձևակերպման տեխնոլոգիաներին:

ԱԿ-7 - տիրապետի հիմնական շարժողական ընդունակությունների մշակման տեխնոլոգիաներին,

ԱԿ-10 - մանկավարժական իրավիճակներն ու գործընթացները ըմբռնելու և օբյեկտիվ գնահատելու կարողություն,

ԱԿ-12 - այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու, տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու կարողություն,

ԱԿ-16 - Հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում և կազմակերպություններում «Ֆիզկուլտուրա և սպորտ» առարկան պատշաճ մակարդակով դասավանդելու կարողություն:

**ե) Ուսուցչական կոմպետենցիաներ (ՈԻԿ)**

ՈԻԿ-2, ՈԻԿ-5, ՈԻԿ-6, ՈԻԿ-10, ՈԻԿ-12, ՈԻԿ-13

**2022-2023 ուստարվա արտադրական պրակտիկայի ժամանակացույց**

**10.11.2023 - 07.12.2023**

<b>Պրակտիկայի փուլը</b>	<b>Կատարվելիք աշխատանքը</b>	<b>Պրակտիկայի վայրը</b>	<b>Անցկացման օրը</b>	<b>Պատասխանատու</b>
<b>1-ին շաբաթ</b>				
Նախապատրաստական փուլ	Ծանոթացում արտադրական պրակտիկայի բովանդակությանը, ծրագրին, ժամաքանակին, պրակտիկայի իրականացման վայրերին, փաստաթղթերին:	ՎՊՀ, ԱՍ ամբիոն		Ղեկավարներ 1.Մաթիա Նուրիջանյան
Այցելություն Վանաձորի թիվ 10 ավագ դպրոց	Ծանոթացում դպրոցի աշխատանքներին, հնարավորություններին:	Ք.Վանաձոր, թիվ 10 ավագ դպրոց		Ղեկավարներ. 1.Մարիա Նուրիջանյան
Ֆիզկուլտուրայի դպրոցական ծրագրերի վերլուծություն	Ուսանողների հետ վերլուծել ուսումնական ծրագրերը:	Վանաձոր, ՎՊՀ		Ղեկավարներ. 1.Մարիա Նուրիջանյան 2.
Ֆիզկուլտուրայի դասերի դիտարկում	Վերլուծություն ուսուցչի և մեթոդիստի հետ	դպրոցներ		Ղեկավարներ. 1. Մարիա Նուրիջանյան
<b>2-րդ շաբաթ</b>				
Ֆիզկուլտուրայի դասերի անցկացում ուսուցչի մասնակցությամբ: Օրվա քննարկում, վերլուծություն:	Ուսանողների մասնակցությունը ընտրված դասարաններում:	Նշանակված դպրոցներ		Ղեկավարներ 1.Մարիա Նուրիջանյան
«Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի անցկացում ուսուցչի մասնակցությամբ համաձայն ծրագրային պահանջների:	Օրվա քննարկում, վերլուծություն:	Վանաձորի նշանակված դպրոցներ, ՎՊՀ		Ղեկավարներ 1.Մարիա Նուրիջանյան
<b>3-րդ շաբաթ</b>				
«Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի	Օրվա քննարկում,	Վանաձորի	.	Ղեկավարներ



ինքնություն անցկացում, համաձայն ծրագրային պահանջների:	վերլուծություն:	նշանակված պրոցներ, ՎՊՀ		1. Մաքիա Նուրիջանյան
<i>4-րդ շաբաթ</i>				
«Ֆիզկուլտուրա» առարկայի դասերի ինքնություն անցկացում: Տեսական դասի անցկացում նոր ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Դասի ընդհանուր և մոտոռիստության որոշում: Անցկացնել «ուրախ ստարտներ» :	Օրվա քննարկում, վերլուծություն:	Վանաձոր նշանակված պրոցներ, ՎՊՀ		Ղեկավարներ 1. Մաքիա Նուրիջանյան